

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը Հանրապետության տոնի առիթով

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի կապակցությամբ: Տոն, որը միավորում է մեր ողջ ժողովրդին և խորհրդանշում նրա ազատատենչ ոգին: Դարեր շարունակ պետականությունից զրկված հայ ժողովուրդն իրականացրեց իր դարավոր երազանքը՝ ստեղծեց անկախ ու ինքնիշխան պետականություն՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը:

Նորանկախ հանրապետության ստեղծումն արդյունք էր 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի: Եվ չնայած իր գոյության կարճատևությանը, այն կարողացավ սերունդներին փոխանցել արժեքային նոր համակարգ՝ մեր երկրի ու ժողովրդի համար բացելով համակողմանի զարգացման հեռանկարներ: Մենք մեր պատմության ընթացքում հաճախ ենք հաղթանակներ կոել պարտադրված ճակատամարտերում՝ ինքնապահպանության բնական մղումով: Այդ հաղթանակները կերտվել են մեր ժողովրդի ջանքերով ու նվիրումով, սեփական ուժերին ապավինելու հաստատակամությամբ, ինչի կարևորությունը երևաց նաև մեր օրերում:

Կրկին շնորհավորում եմ այս մեծ տոնի՝ առաջին հանրապետության հռչակման 98-րդ տարեդարձի առիթով, մաղթում մեր երկրին խաղաղություն ու նորանոր ձեռքբերումներ, մեր ժողովրդին՝ ամուր հավատ ու միասնություն:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան

27 մայիսի 2016թ.